



Մարդը երեք տարբեր մասեր ունի, մարմին, հոգի եւ շունչ: Մարմինը շօշափելի է կրնանք դպնալ: Հոգին ուղղակի յարաբերութեան մէջ է Աստուծոյ հետ: Շունչը կ'ուղղէ մէկու մը առօրեայ կեանքը: Շունչը կեանք կ'ապացուցէ:

**Երկինքի մէջ այր եւ կին պիտի ըլլա՞յ:**

Ոչ թէ երկրային վիճակով: Գլխաւոր տեղեկութիւնը կ'ունենանք Մատթ. 22:23-33-էն: Յիսուս տարբեր հարցումի մը պատասխանելով կ'ըսէ որ յարութիւն առնողներ չեն ամուսնանար: Հետեւաբար ամուսնութիւնը ներկայ կեանքի մէկ մասն է եւ ոչ թէ գալիք կեանքի:

«Յիսուս պատասխան տալով ըսաւ, Դուք մոլորած էք, որ ոչ չ'ըրբերը գիտէք եւ ոչ Աստուծոյ զօրութիւնը: Քանզի յարութեան ատեն ոչ կին կ'առնեն, եւ ոչ երկան կը տրուին, հապա երկինքի մէջ Աստուծոյ հրեշտակներուն պէս են» (Մատթ. 22:29-30):

Շատ հաւանաբար Յիսուս ոչ միայն ամուսնական արարողութեան կ'ակնարկէ այլ նաեւ անոնց դերերուն, պարտականութիւններուն եւ մարմնաւոր մտերմութեան: Իրողութեան մէջ Ան կ'ըսէ որ երկինքի մէջ հրեշտակներու նման պիտի ըլլանք, այսինքն հրեշտակները կրնան շարժիլ հոգևոր եւ մարմնաւոր եզրերու մէջ: Գիտենք նաեւ անապականացու, անմահ մարմիններ պիտի ունենանք (Ա. Կորնթ. 15:53):

Այս բոլորը չեն նշանակեր որ երկրի վրայ ամուսնացածներ երբ երկինք հասնին իրարու հետ յարաբերութիւն պիտի չունենան: Իրար պիտի ճանչնանք ու սիրենք անչափելիօրէն: Որեւէ յարաբերութիւն երկինքի մէջ երկրի վրայ եղածէն տարբեր պիտի ըլլայ:

**Կրնա՞ս երկինքը տեսնել, եթէ բաւական մօտենաւ:**

Երկինքի եւ երկինքներու միջեւ տարբերութիւն կայ: Երկինքները կը բովանդակեն, երկնակամարը, տիեզերքը, աստղերը եւ մոլորակները: Այս բոլորը կրնաս տեսնել կամ աչքովդ եւ կամ հեռադիտակի

մը միջոցով: Երկինքը ուրիշ բան մըն է: Աստուածաշունչէն գիտենք որ իրական, անփոփոխ, եւ յաւիտենական տեղ մըն է: Բայց նաեւ գիտենք որ ամբողջութեամբ չենք կրնար հասկնալ: Մեր հասանելիութենէն հեռու, թերեւս լման հոգևոր վայր մըն է: Մարդկային միջոցներով չենք կրնար տեսնել եւ ոչ ալ կրնանք հոն երթալ: Միայն Գառնուկին Գիրքի մէջ գրուած անունները երկինքի թագաւորութիւնը կրնան մտնել:

«Հապա ինչ գրուած է, Այն բաները զորոնք աչք չէ տեսած եւ ականջ չէ տեսեր ու որոնք մարդու սիրտին մէջ չեն ինկեր, Աստուած զինք սիրողներուն պատրաստեց» (Ա. Կորնթ. 2:9):

**Ինչպէ՞ս կրնանք վայելել երկինքը երբ սիրելիներ դժոխքն են:**

Աստուծոյ Խօսքը կը նախատեղեկացնէ որ Տէրը հաւատացեալներու համար պիտի սրբէ ու վերացնէ ամէն արցունք ու ցաւ: Բոլոր անցեալի բաները, մեղանշական աշխարհը կերպով մը պիտի վերցուի: Ասկէ կը հասկնանք որ բոլոր ցաւ պատճառող յիշատակները, ինչպէս գիտութիւնը կամ տեղեկութիւնը որ ընտանիք եւ ընկերներ ունինք, որոնք կը տառապին դժոխքի մէջ, որովհետեւ մերժած են Յիսուս Քրիստոսի միջոցով եղած փրկութիւնը, ամբողջութեամբ պիտի ջնջուի: Գլխաւոր Աստուածաշունչի հաստուածը հետեւեալը կ'ըսէ.—

«Եւ Աստուած անոնց աչքերէն բոլոր արցունքները պիտի սրբէ, եւ ա՛լ մահ պիտի չըլլայ, ոչ սուգ եւ ոչ ալ աղաղակ եւ ոչ ցաւ պիտի ըլլայ ասկէ ետեւ, վասնզի առաջուան բաները անցան» (Յայտ. 21:4): ☺

ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՎԱՆԱԿԱՆ ԵՂԱՅՅՐԵՐՈՒԻ ԵԿԵՂԵՑԻ  
ARMENIAN EVANGELICAL BROTHERS CHURCH

1800 Lake Street  
Glendale, California 91201  
USA

Phone: (818) 507-7400  
AEBCCGlendale.org  
Email: info@AEBCCGlendale.org

ԵՐԿԻՆՔ

- ☺ Երկինքը ի՞նչ բանի նման պիտի ըլլայ:
- ☺ Ի՞նչ է երրորդ երկինքը:
- ☺ Արդե՞ք հոգիիս եւ շունչիս միջեւ տարբերութիւն կայ:
- ☺ Երկինքի մէջ այր եւ կին պիտի ըլլա՞յ:
- ☺ Ինչպէ՞ս կրնանք վայելել երկինքը, երբ սիրելիներ դժոխքն են:



ՀԱՅ ԱՒԵՏԱՐԱՎԱՆ ԵՂԱՅՅՐԵՐՈՒ ԵԿԵՂԵՑԻ  
ARMENIAN EVANGELICAL BROTHERS CHURCH

Ճանչնալ Յիսուս Քրիստոս եւ Ճանչնել զԱյն



## Երկինքը ի՞նչ բանի նման պիտի ըլլայ:

«Եւ սուրբ քաղաքը նոր Երուսաղէմը տեսայ որ երկինքէն Աստուծմէ կ'իջնէր, իր երկանը համար զարդարուած հարսի պէս պատրաստուած» (Յայտ. 21:2) :

«Երկինքը Աստուծոյ փառքը կը պատմէ ու երկինքի հաստատութիւնը անոր ձեռքերուն գործերը կը ցուցնէ» (Մաղմ 19:1): Յայտ. 21:4-ը կ'ըսէ «Եւ Բնք անոնց աչքերէն բոլոր արցունքները պիտի սրբէ, եւ ալ յ մահ պիտի չըլլայ, ոչ սուգ եւ ոչ աղաղակ, եւ ոչ ցաւ պիտի ըլլայ ասկէ ետք, վասնզի առաջուան բաները անցան»:

Երկինքը գրեթէ աննկարագրելի է: Շատ դժուար է երեւակայել ցաւ ու վախ, մտահոգութիւն եւ դրամական նեղութիւն, նախանձ ու փորձութիւն եւ կամ պատերազմ չունենալ: Այն պահուն երբ հաւատացեալը մարմաւոր կեանքէն յաւիտենական կեանքի կը փոխադրուի, կեանքի ամբողջ ծանրութիւնը կը հալի ու կը շոգիանայ: Երկինքը անսահման ուրախութիւն է, անվերջանալի խաղաղութիւն, սէր, գեղեցկութիւն, պաշտամունք եւ ապահովութիւն: Առաւել, չեմ կրնար երեւակայել երբ պիտի հանդիպինք մեզմէ առաջ գացողներուն: Սակայն մեծագոյնը Հայր Աստուծոյ, Որդի Աստուծոյ եւ Սուրբ Հոգի Աստուծոյ ներկայութիւնն է, որ յաւիտեան յաւիտենից մեզի հետ պիտի ըլլայ: Երկինքի փոխարէն եղած տեղը դժողքը ամբողջութեամբ հակառակն է մի քանի տողեր առաջ նկարագրուածէն: Մարտափելի է յաւիտենապէս Աստուծոյ ներկայութիւնը կորսնցնել ու յաւիտենապէս տառապիլ:

Տակաւին չեմ հասկնար որ ինչո՞ւ մարդիկ մինչ ժամանակ ունին, Աստուծոյ հետ չեն հաշտուիր: Հաւանաբար կան անձեր որոնք չեն հաւատար, եւ կը ցաւիմ անոնց համար: Բայց կան անհատներ սահմանի վրայ կը քալեն, գիտակցելով որ օր մը պէտք է ընտրութիւն կատարեն: Անոնք կը հաւատան Աստուծաշունչի ճշմարտութեան, սակայն կ'ուզեն քիչ մըն ալ երկրաւոր կեանքը ապրիլ: Սիրելի բարեկամ երկար մի սպասեր:

## Կը խորհի՞ս երկինքի մէջ կենդանիներ պիտի ըլլան:

Աստուծաշունչին մէջ յատուկ ապացոյց չկայ, որ կենդանիներ հոգի ունին: Կենդանիները թէև Աստուծոյ կատարեալ եւ սքանչելի ստեղծագործութեան մաս կազմելով փառք կը բերեն Աստուծոյ, բայց կը կասկածիմ անոնց երկինքի մէջ գտնուելուն, թէև ոմանք կ'ուզեն իրենց կենդանիները իրենց հետ ունենալ երկինքի մէջ: Հոգ չէ թէ կենդանիներ պիտի ըլլան կամ ոչ, կարելորը եւ հոն պիտի ըլլամ:

«Եւ Եղիսէ աղօթք ըրաւ ու ըսաւ, Ով Տէր, ասոր աչքերը բաց որպէսզի տեսնէ: Եւ Տէրը ծառային աչքերը բացաւ, ու տեսաւ որ ահա լեռը Եղիսէի չորս կողմը հրեղէն ձիերով ու կառքերով լեցուն էր» (4 Թագ. 6:17):

«Եւ տեսայ երկինքը բացուած եւ ահա ճերմակ ձի մը, ու անոր վրայ հեծնողը Հաւատարիմ ու Ճշմարիտ կ'ըսուի, եւ արդարութեամբ դատաստան կը տեսնէ ու կը պատերազմի» (Յայտ. 19:11):

«Ու երկինքի մէջ եղող գօրքերը անոր ետեւէն կ'երթային ճերմակ ձիերով, ճերմակ ու մաքուր բեհեզներ հագած»: (Յայտ. 19:14):

## Երկինքի մէջ ազատ կամք պիտի ունենա՞նք:

Կարելոր է յիշել որ Աստուած մեզ ազատ կամքով ստեղծած է, որպէսզի մեր կեանքերուն մէջ որոշումներ առնենք: Մեղքը փոխեց մարդուն միտքը կատարելութենէն անկատարելութեան: Մինչ երբ ամէն բան ներդաշնակ էր Ստեղծիչին հետ, սկսաւ քայքայուիլ մեղքի պատճառով: Այդ քայքայումը այսօր ալ կը շարունակուի:

Մարդը այլեւս չի կրնար իր ազատ կամքը գործադրել, որովհետև իր որոշումները ապականած ու արուած են Ադամական մեղքի պատճառով, Ադամի անհնազանդութեամբ: Մարդուն յեղաշրջումած ու տարօրինակ մտածելակերպը պատերազմի եւ այլ սարսափելի վիճակներու պատճառն է: Երբ Յիսուս վերադառնայ, հազարամեային (Քրիստոսի հազար տարուայ երկրի վրայ իշխանութիւնը) պայմանները աւելի լաւ պիտի ըլլան:

Բայց մարդուն սերունդներու արիւնը վարակուած պիտի ըլլայ Եդէմի անկումով:

Մարդ պիտի շարունակէ գործել Աստուածատուր ազատ բարոյական ազդակով: Այսուհանդերձ, փառաւոր ժամանակը կու գայ երբ մեղքով վարակուած կամքը ամբողջութեամբ, յաւիտենապէս պիտի ջնջուի : Այս հազարամեայէն ետք պիտի ըլլայ, եւ վերջին դատաստանը մեղքին վրայ, յիշուած է Մեծ, Ճերմակ Դատաստանի Աթոռը :

Յովհաննէս, մեծ առաքեալին տրուեցաւ հետեւեալ մարգարէութիւնը Յիսուս Քրիստոսի կողմէ «Եւ ան որ աթոռին վրայ կը նստէր, ըսաւ. Ահա ամէն բաները նոր կ'ընեմ. ու ըսաւ ինծի, գրէ, վասնզի այս խօսքերը ճշմարիտ ու հաւատարիմ են» (Յայտ. 21:5):

Մեր ազատ կամքը որոշումներ առնելու պիտի վերահաստատուի ինչպէս որ սայթազումէն առաջ Ադամի պարագային էր: Մենք պիտի ունենանք ազատ կամք, սակայն պիտի հասկնանք որ իսկապէս ազատ ըլլալու համար մեր կամքը կատարեալ ներդաշնակութեան մէջ ըլլալու է Ամենակարող Աստուծոյ կամքին հետ:

## Երբորդ Երկինքը ի՞նչ է:

Հոն Աստուած կը բնակի: Առաջին երկինքը ցերեկ ատեն կը տեսնենք (երկնակամարը), երկրորդ երկինքը գիշեր ատեն կը տեսնենք (աստղերը), եւ երրորդ երկինքը հաւատքով կը տեսնենք (հոն ուր Աստուած կ'ապրի):

«Մարդ մը գիտեմ Քրիստոսով տասնըչորս տարի առաջ, յափշտակուեցաւ մինչև երրորդ երկինք» (Բ. Կորնթ. 12:2):

## Արդեօք իմ հոգիիս եւ շունչիս միջեւ տարբերութիւն կա՞յ:

Այս դժուար հարցում մըն է: Աստուածաշունչը յատուկ տեղեկութիւն չի տար թէ տարբերութիւն կայ: Այս բաները փոխաբերաբար գործածուած են ինչպէս Ղուկ. 1:46-47: Ուրիշ տեղեր «հոգի» գործածուած է նկարագրելու մարդուն երկրաւոր տարրական ապրելակերպը եւ «շունչ» գործածուած է երբ կը խօսուի Աստուծոյ հետ ունեցած հոգեւոր յարաբերութեան մասին: Այս վերջինը կ'երեւի Ա. Կորնթ. 2:14-ի մէջ: